

ՃԻՒՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարին	համար
Տարեկան	12 Գր
Կիցանակայ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Կիցանակայ	8 "

Անկերիկայի	համար
Տարեկան	3 ցր.
Կիցանակայ	1.50 "

Դասնուցման տարի սուս քիմ երևալիս համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սակերիս հ. երեքիս ակնիս ակնուցման համար 20 0/0 զեղչ կըլ լայն վառակայի համար ձեռք 10 սակերիս

ՇԱՐՋՈՒՄ

ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԻՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԶՐ ՏՐՐԱՎՈՒԻ ԶՈՐԵԲՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկի իւրազրուեալսն հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռք (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարին) համար ձեռք (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեւ տրուի

ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ

Յունիս 15 Պուշկարին վիճենա կը հեռագրեն թէ Անգլիական դեսպանը Օֆօնոր Սուլթանին տուած վերջին այցելութեան միջոցին երկար խօսք է Հայաստանի կացութեան մասին:

— Յունիս 14ին Պուշկարին կը հազորդեն որ Բիթլիզէն հասած տեղեկութիւնները բաւական միտմարական են. Շնորհիւ Անգլիական, Ռուսական եւ Ֆրանսական դեսպաններու միջամտութեան, Սուլթանէն վաւերացուած պահանջները ինչպէս կերեւի լրջօրէն կիրառուուին:

1. — Կը շեղուին խոսքով լինենքու ըրող մասնակցողները բացի ղեկավարներէն:
2. — Տ հազար սակի կը բաշխուին խոսքով լինենքու ատեն խորտակուած տները շինելու եւ վերանորոգելու համար:
3. — Փախստականներուն կը թոյլատրուի կրկին վերադառնալ իրենց լքած գիւղերուն մէջ:
4. — Կարօտներուն պաշար կը բաժնուի:

Բ. Գուրը կը վիճէ զոհերու եւ բռնութիւններուն մասին:

Դեսպանները չեն ուզեր այդ մասին վիճի մէջ մտնալ Բ. Գուրը հետ, մինչեւ որ ստանան իրենց հիւպատոսներուն քննութեանց արդիւնքը: Գործերու մանրամասն քննութիւնը հաւանական է որ բաւական երկար ժամանակ խէ: Շատ զոռուար պիտի ըլլայ անպայման զրական տեղեկութիւններ ստանալ, որովհետեւ քաղաքացիները առ հասարակ կը չափազանցեն պատահածները, իսկ վնասուած գիւղական բնակչութիւնը նախորդ բռնութիւններէն սարսափած, ապագայի գալիքէն զոգսահար տրամադիր չի երեւիր ճշտութեանը համապատասխան ցուցմունքներ տալ:

(Պ. Հ. Գ.)

տրութեան միջոցին իսկ շարժի տիպերը իրենց շարժիական հոգին ուղեցին ցոյց տալ իրենց նէրը տալու համար զանազան պայմաններ դնելով:

Օրինակ, նէրները անպատճառ, անմիջապէս եւ ուղղակի պէտք է ուղարկել երկրի կառուցիչներին, Անգրանիկին՝ և նրանցից ստորագրութիւն ստանալ, որովհետեւ ոգեւորված շարժիներէն մի քանիսը իրենց շարժիական տրամաբանութեամբ եւ վատ հոգեբանութեամբ ուզում են միտքեր պլտորել և հասկացնել տալ թէ՛ զաշնակցական եւրոպայի մարմինները վստահելի չեն. մտաւնալով, որ նոյն կառուցիչներն, առանց այդ շարժիների ոգեւորութեան ու ստանց նրանց զըրամի, մինչեւ օրս զէնքով, գրամով եւ մարդկանցով աշակցել ու նպաստել է նոյն Հ. Յ. Դաշնակցութիւնը որին վստահել չեն ուզում շնչին գումարներ:

Իսկ այդ, մէջտեղ ընկածները՝ իրենց այդ հրէական պայմանները հրապարակ նետելով, կարծես ուզում են ժողովրդին հասկացնել, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը կարող պայթելուց առաջ հեռատես հոգեւորութիւնը չէ ունեցել զիմադրողների վերաբերմամբ, ու նրանք այսօր մեծ կարիք են զգում շարժիական պայմաններով արվելիք դրամին և Հ. Յ. Դաշնակցութեան պատկանող մարմինները ու անհատները պարտաւորված պէտք է լինեն այդ կուսակցութիւնը ստորնացնող պայմաններին ենթարկվել մի քանի հազար ֆրանքի համար: Սխալ համոզում:

Դաշնակցութիւնը նախապէս աւելի շատ խոշոր գումար է զըրել Անգրանիկները տրամագրութեան տակ. այնքան խոշոր, որ այդ շարժիները շատ տարվան մէջ չեն կարող իրենց ոգեւորութեան գերադրական աստիճանին հասնելու պարագային անգամ այդ տեսակ մի գումար հաւաքել: Սխալ պայմաններում մենք այսօր մեծ

ուրախութեամբ ենք հրատարակում Պալք. շրջանի Կ. Կոմիտէի ազգայնութիւնը, որ շատ յարմար ժամանակին է լինում:

Այդ յայտարարութիւնով մեր շրջանի բարձ. մարմինը գալիս է փաստելու, թէ ինքը Դաշնակցութեան վարկը պերագատում է շարժիական գրամներէն, և արժամարկը չէ իր գործունէութիւնը անհեթեթ և կուսակցութիւնը ստորնացնող պայմաններով կաշկանդել:

Այդ յայտարարութիւնը ունի և ուրիշ առաւելութիւններ. նախ նա մի հարաւոր շարժի նորատուներին հեռացնում է այն իրապէս ոգեւորված տարից, որը անպայման վստահութիւն ունի Դաշնակցութեան վրա, ու ըմբռնել է տալիս թէ Դաշնակցութիւնը օգտվում է միայն այն հայերէն, որոնք համոզված են թէ հայ յեղափոխութեան վարիչ մարմինը այսօր ներկայումս է հայ յեղ. Դաշնակցութիւնը. երկրորդ՝ Պալքանեան շրջանի հայերին հասկացնել տալիս որ Դաշնակցութիւնը իր գոյութեան ամբողջ ընթացքում եղել է հայ կառուցիչի կուսակցութիւնը, որ նրանում անհատները գոյութիւն չունեն. ու զաշնակցական ամեն մի գործ կարող է կատարվել միայն և միայն կազմակերպութեան անունով:

Այսօր երկրի կուրը վարողները զաշնակցականները են. նրանք մինչեւ օրս իրենց նութական պահանջներին բաւարարութիւն են ստացել Հ. Յ. Դաշնակցութեան կուսակցութիւնից և շարունակում են ստանալ, և եթէ նրանց յոյսը գրած լինէր շարժիների պատահական ոգեւորութեան վրա, նրանք այսօր գոյութիւն չէին ունենալ իրրեւ փառաւոր մարտիկներ իսկ այդպիսի պայմաններում վեր կենալ զաշնակցական կառուցիչներին զատել Հ. Յ. Դաշնակցութեան ամբողջ մարմինից և կործել որ այդ կուսակցութեան կողմից կընդգրվի մի քանի հարիւր նոյն իսկ

շատ հազար ֆրանքներ, այդ տեսակ ստորին պայմաններով, նշանակում է զաղափար չունենալ Դաշնակցութեան կազմակերպական բարոյական հիմունքները վրա:

Դաշնակցութիւնը իր յառաջագիմութիւնը, իր զօրաւորութիւնը պարտական է այդ բարոյական հիմունքներին. և զաշնակցականները գերադրյալ պարտականութիւնը պէտք է լինի մի մազի շափ իսկ չը շեղվել նրանցից, ամենաշլացող շերտայնական հանգամանքների պարագաներում անգամ:

ՎԱՐԿՕ

ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Կազդարարենք Պալքանեան շրջանի Հ. Յ. Դաշնակցութեան բոլոր մարմիններուն որ հանգանակութիւն կատարած ատեն նրա իրատուներուն՝ բացի Դաշնակցութեան ընկալագրերէն և նրա էրներու ցանկը «Իրօջակի մէջ հրատարակելէն, չը զիջանին կազմակերպութիւնը վարկաբեկող խոստումներ ընել՝ չը համոզուած նուիրատուներ ստեղծելու նպատակով:

Եթէ գտնուին արտառոց պահանջներ ընող և կազմակերպութիւնը ստորնացնող պայմաններ զնոյ նուիրատուներ— օրինակի համար Անգրանիկի և այլ գործիչներու ստորագրութիւններ— այդպիսիներու նուէրները չը պէտք է ընդունել, իսկ ընդունուածները ետ պէտք է վերադարձուին որչափ ալ գումարները մեծաքանակ ըլլան:

Անգրանիկները Հ. Յ. Դաշնակցութեան գործիչներն են և անոնք իրենք գիտեն Դաշնակցութեան անհրաժեշտ գումարները ստանալու միջոցները, ստացած են, ու կըստանան և պէտք չունին այն մարդոց դրամին, որոնք չեն կրնար անպայմանօրէն վստահել այդ գործիչներուն պատ-

ԻՆՉՈՒ ՈՉ ԱՆՊԱՅՄԱՆ Ի ՆՊԱՍՏ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ստանուի վերջին անցքերը մի քանի քաղաքների հայերին մասնաւոր ոգեւորութիւն պատճառեցին, ու բրդաւ երկրում կուսողներին օգնելու ապագակը:

Ի հարկէ զովելի է այդ ոգեւորութիւնը, սակայն այդ ոգեւորութեան միջոցին իսկ շարժի տիպերը իրենց շարժիական հոգին ուղեցին ցոյց տալ իրենց նէրը տալու համար զանազան պայմաններ դնելով:

կանած կազմակերպութեան մարմիններուն :

Անգրանիկին և անոր ընկերներուն զէնք, որամ, ուսմամբ միտք մատակարարողը Շ. Յ. Գառնակցութեան է, ուստի և հանգանակութեան ընկերը, մարմիններու կողմէն, միայն և միայն կազմակերպութեան անունով պէտք է կատարուին : Մեզի հետ չեզոք և մեզմէ դուրս անկախ ներհարաւորութեան պէտք է ձգել իրենց կամքին : Ինչ կերպ որ կուզեն թող ընեն, ինչ կերպ որ կուզեն թող գրամը կուռնդեն : րուն հասցնեն :

Պալլ. Կնդր. Կոմիտէի 1904 Յունիս 13

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԹՕԼՍՊՕՅ

Ամենալաւատեա ռուսները իսկ այսօր համոզուած են, թէ ճապոնական պատերազմը Ռուսիոյ ահագին միասնեան հասցուց ուղեւ պիտի հասցնէ : Ռուս մտածող տարրը, մանաւանդ անոնց կարեւոր ներկայացուցիչները, կաշկանդուած ռուսական գրաքննիչութեան շղթաներով, շեն կրնար իրենց կարծիքները յայտնել : Ատոնցմէն ամենէն հուշակատրը և աղքատիկը, կոմս Թոլստոյ հնարքը գտած է իր մտքերը աշխարհին յայտնելու : Ան խոշոր յօդուած մը հրատարակած է Լեւոնտինի «Թոլստոյ» թերթին մէջ և ուրիշ թերթերու ալ արտօնած որ արտատպեն :

Յօդուածին վերնագիրն է «ԹՕԼՍՊՕՅԻ ՄԱՐԿԻ» :

Թոլստոյ կը խօսի պատերազմի մասին և յօդուածը կը ըստի աստուածաշունչէն առնուած հետեւեալ խօսքերով .

«Իսկ է ձեր ժամը» կոմս կը ըզրտէ զուր տեղ թափուած արեան համար, և կը հարուածէ ըզրոր անոնք, որ պատերազմին պատճառ եղած են :

Կոմսը Յարէն, Միկատեօն, տէրտէրներէն և խմբագիրներէն կը խնդրէ իրենց ձեռքէն եկածը ընել մարդկային արեան հեղուակը դարձնելու համար : Ան Ռուսիացիներուն և ձառնացիներուն հասարակ զինուորէն սկսեալ մինչև զօրավայրերը՝ խորհուրդ կուտայ հրաժարիլ աշակցելէ այդ մասսայական շնջումին, որ այս րոպէիս տեղի կունենայ Մայրագոյն Աբեւելքի մէջ :

Թոլստոյի այս համակր Անգլիոյ մէջ զօրեղ տպաւորութիւն գործած է : Սակայն քանի՞ ռուս զինուոր, բօք, և զօրավար պիտի կարդան հուշակատր մարդասէրին այդ մարդասիրական ճիշդ... Եւ ոչ մէկը : Ռուսիոյ մէջ մարդասիրական ճիշդ լսելու պայմանները կը պակսեն :

ԹԱՏՈՒՆ

Մի քանի օրից ի վեր արդէն չուր էր տարածուել թէ Եգիպտոսից եկած մի հայ դերասանական փոքրիկ խումբ ներկայացուցներ է սալու վառնայի մէջ : Գրեթէ նոյն օրից ամէն օր մարդ հանդիպում էր Սֆինքսի եւ Բուրգերի կողմերից եկած այդ խումբի անդամներին, որոնց մէջ մանաւանդ աչքի էր ընկնում մի դուգուն ու նիհար երիտասարդ, որը նրման մի խորհրդաւոր ստուերի, մրտածկոտ, բայց վճռական անցնում էր փողոցներով : Այդ մենակը պարոն Շաւարշն էր՝ խմբի համակրելի կառավարիչը :

Երկար սպասեցնել չը տուց պ. Շաւարշը. եւ անա երեկ երեկոյ (հինգշաբթի) պ. Թոլստոյի քննարկ վարձած Ձերվէնրակ պարտկում տուց անաչին ներկայացումը՝ Միս Նէլլի չորս գործողութեամբ կրաման :

Խաղը թուրքերէն լիզուով լինելով դժբաղդաբար չը կարողացայ նրբութիւնները, մանաւանդ վերջին արարուածի կապը ըմբռնել, սակայն իր ընդհանուր գծերով հետեւեալն էր. Միս Նէլլին (տիկ. Նուարդ) եւ Լիւսիէն (պ. Շաւարշ) մի շրջիկ գերասանական խմբի անդամներ են. Մարսիլիայում խաղացած ժամանակ Լիւսիէնը սիրահարուած է մի ուրիշ ընկեր գերասանուած վերա, որ կարմենի դերն էր խաղում, որից եւ չարաչար խաբուած է, եւ այդ օրից էլ ատուած է այն կեղծիքն ու թոյնը (իր խօսքերով), որ կիս է կոչուած :

Դրաման սկսում է իսկապէս Մարսիլիայից յետոյ ուրիշ քաղաքում. երբ խմբի միջից բացակայում է արդէն կարմենը, Այստեղ Միս Նէլլին, որի համար սէրը մի խաղ է եւ սիրելը ժաւանց, մի կողմից անշուշտ նախանձը և միւս կողմից քմահաճոյքը մղում են իր սէրն արտայայտելու Լիւսիէնին, այդ պայժառ ու սիրուն երիտասարդին, որի համար սէրը կանխ է. եւ սիրելը սպարիլ, եւ որը կարմենից չարաչար խաբուած ու այլեւս իր հաւատը զէպի կը ոչ սէրն ու երգումները մեռցուցած՝ տառապում է վարուժանը կորցրած տատարակի նման. եւ օր օրի մաշոււմ կրամենի տուած վերքից արեւնաքամի վերջապէս դերասանական խմբի մի ուրիշ անդամի հնարագիտութեամբ՝ Պրիոլի (պ. Գալֆայիան), որը մի հակառակորդ է Լիւսիէնին, կարողանում է առիթը գտնել եւ Լիւսիէնին յայտնել, մանաւանդ ընդունել սալ իր սէրը : Սորանով վերջանում են գրամայի անաչին երկու վարագոյրները :

Երրորդ վարագոյրին Լիւսիէնն արդէն թողարկում է ընկել, հազուաէ է եւ արեւն թքում, եւ սրպէսզի այս խորտակուած կեանքը աւելի ողբերգական լինի՝ նաեւ խաբուած է միս Նէլլիից :

Միս Նէլլին, իր ծնունդով իսկ մի քմահաճոյք, արհամարհում է ծաղրում է Լիւսիէնի սիրտն ու թոքը, որոնք իր իսկ պատճառով երկու ջն էլ արեւնում են... Այն Լիւսիէնին, որից ստրկական աղերսանքներով այս խօսքն առաւ... եւ յայտարարելով նրան, որ էլ չի սիրում՝ հետանում է դահճի յաղթական գնացքով :

Չորրորդ եւ վերջին արարուածը, որ, ինչպէս ասացինք, անկապ տըպաւորութիւն թողց՝ բնմի վերայ բնմ էր (ինչպէս Քինի, Համլետի մէջ)

ուր Օթէլլո խաղալիս. իրօք Լիւսիէնը (Օթէլլո) սպանում է Դէզմոնդանային (միս Նէլլին) եւ յետոյ ինքնախեղդ յիւնում, որով եւ վերջանում է դրաման :

Հակառակ ներկայացման բացօթեայ լինելուն, որ չորս կողմից աններդաշնակ եւ խառնիճաղանճ երաժշտութեան ձայները խանգարում էին. հակառակ միս Նէլլիի անյարմարութեանը թփփ կնոջ գերի համար, եւ նորա ազախնի՝ էլիզ (օր. Բերթ) բացարձակ անկարողութեանը. հակառակ Պրիոլի (պ. Գալֆայիան)՝ Լիւսիէնի հակառակորդի՝ հոգեբանական միակողմանիութեանը. եւ հակառակը այն գերագոյն հեղուկութեանը, որ ներկայացնում է ին խմբի ու կրակ բնմն եւ հասարակութեան թիւր (վաթսու՛ն հոգի)։ Պարոն Շաւարշը կարողացաւ միայնակ յաղթական դուրս գալ եւ ոգեւորուած ծափեր խել՝ փրկելով իր հետ իր ամբողջ խումբը :

Երկ. Լուսարդը, թէեւ կարողանում է ինքզինքը ազատ պահել թէ՛ շարժումների եւ թէ՛ խօսակցու : Իւններ մէջ, սակայն անկարող է արտայայտել բարդ հոգեբանութեան նրբութիւնները : Նա գրեթէ նոյնն է թէ՛ կասկածի, թէ՛ վշտի եւ թէ՛ արտախոթեան վայրկեաններին, նոյնը ձայնով, նոյնը ձեւերով եւ նոյնը միմիջով : Օրինակ Բ. արարուածի մէջ նա երբ լսում էր Լիւսիէնի ցաւած սրտի դառն խօսքերը, նրա յուսախաբութիւնները եւ կնոջ մասին ունեցած կարծիքներն. միս Նէլլիի ժպտին չէին ընկերանում աչքերն ու մարմինը՝ անաչինները իրենց վագրային փայլակներով, երկրորդը իր օձային ճկունութեամբ ու գալարուձեւերով. եւ յետոյ այդ ժպտից, որ իր լուսութեան մէջ իսկ պէտք է արտայայտել երիտասարդ սրտերի արեւնով կերակրուող կիրք, շատ անխորհուրդ էր, առուակ մըն էր ովկեանի փոխարէն : Իսկ երբ մի քանի վայրկեանից Լիւսիէնի օտքերն ընկած նրանից աչքեր էր աչքերուս՝ այնպիսի տպաւորութիւն դրոճեց, որ կարծես թէ Լիւսիէնին ճաշ էր հրաւիրում : Գալձեալ, Գ. արարուածի մէջ, երբ նա արդէն իր անգութ զմահաճոյքին յագորդ էր տուել եւ դահճի գերի մէջ էր գտնուում, նա անկարող եղաւ այդ ներկայացնել : Կոչիկի ծայրը Լիւսիէնի նետած թաշկինակի վերայ արեան քիճն էր որոնում, իսկ մինչդեռ դէմքն ու աչքերը ոչինչ չէին արտայայտում. ո՛չ ցաւ, ո՛չ հեղուկութիւն :

Օրիորդ Բերթը շատ անյայտ է թէ՛ ձայնի և թէ՛ ձեւերի կողմից, թէեւ աղախնի համեստ գերի մէջ էր : Պ. Գալֆայիանը անյայտ չէ՛, ամեն պարագայի մէջ, սակայն նա անկարող է հակառակորդի դեր խաղալ : Մեր կարծիքով նա մի քիչ շատ սշու հօրհօր է պահում ինքզինքը բնմի վերայ թէեւ շատ համարձակ և աշխոյժ : Նա անպայման բաւական յաջող կարող է կատարել պօս վիլիորֆի դերերը, ինչպէս այդ սպայուցեց գաւեշտի մէջ :

Իսկ Պ. Շաւարշը փայլեց իր անվիճելի սաղանդով, ճկուն և սշակուած ձեւերով, բաւականին զարգացած միմիջով ճէնց սկզբից, Ա. արարուածում նա դեր չունէր. Բ.ից սկսեց և ուժեղ տպաւորութիւն գործեց այս տեսարանում, երբ Միս Նէլլին բացատրում էր իր վիշտն ու զայրոյթը

և թափում էր նորա ստալ իր սիրտը մէջ ունեցած յուսախաբութեան թոյնը : Պ. Շաւարշ այս տեսարանում ցոյց տուեց, որ ինքը լաւ դերասան է : Սակայն նա Գ. արարուածին էր վերապահել իր ամբողջ ուժը, և ո՛ր հրաշալի էր բառի բուն նշանակութեամբ սկզբից մինչև վերջը :

Այդ արարուածում նա ցոյց տուեց թէ՛ ոչ միայն դերասան է, այլ եւ մի արուեստագէտ, մի արուեստագէտ իր 3/4 մասով կատարելագործում :

Նա քննադատութիւնից բարձր էր, երբ հազարով բնմ դուրս եկաւ, նրանց, ու հազիւ երկու խօսք և հայեացք փոխանակելով Պրիոլի հետ, յանկարծ լաց եղաւ — Ամբուած եմ... աղաղակելով : Նորա արցունքը ու աղաղակը այնքան բնական էին և ուժեղ, որ ցնցեց հասարակութիւնը : Նոյնպէս հրաշալի էր, երբ թաշկինակը բերանին դնելով՝ արեան քիճը ցոյց տուեց Նէլլիին և յետոյ յուսահատ կատաղութեամբ գետին նետեց : Հրաշալի էր Նէլլիի հետանալուց յետոյ, երբ մաքառման և պարտում մէջ վրէժի ծայրաւից յղած, ու մէջ, Այս վայրկեանների մէջ նա այնքան աստուածային էր, որ վերջի արարուածը, բնմի վերայ բնմ՝ հակառակ որ պող անցաւ նախ անկապակցութիւնից և յետոյ Պ. Շաւարշի ո՛չ անապան պատաս աղքեցութիւն գործելու :

Երկրորդ վեր ասելիքը Պ. Շաւարշի անդրանիկ և յաջող ներկայացումի մասին, յիշենք որ կիրակի երեկոյ (20 յունիս) պիտի տայ իրրորդ ներկայացումը, խաղալու է Եղիշ Նիկարիչը պիեսը :

Աւելորդ է ասել, որ նա պիտի կատարէ իր դերը նոյնքան բարձր, ճուճեամբ ու տաղանդով, Պ. Շաւարշի սի քանկարն հլւր է. անտարբերուեալ զէպի նա. դա նշանակում է հոյհոյի գեղարուեստը : Պ. Շաւարշին ոչ թէ միայն պէտք է աշակցել, այլ եւ նրան խնդրել, որ մնայ այստեղ գունէ քանի որ Եգիպտոսը արեւի ներդեհների մէջ է :

Հայ հասարակութեան մասին դեռ չի կարելի մի բան ասել, որովհետեւ Պ. Շաւարշին դեռ չէին ճանաչում, բայց թէ սրտից յետոյ Պ. Շաւարշի թատրոնը ծայրից ծայր (գոնէ) լի լիցուի, ապա իրենց գեղարուեստական ճաշակի մասին շատ վատ վիսյակար պիտի տուած լինեն վառնացիք :

Ա.

ՅԻՆԻՊԷԻ ԹՂԻՍԿԻՆԵՆ

— 0 —

Ա՛ : հոգիներ . . .

Աս երկու բառով կրնանք օրակել Յիւլիպէի կարգ մը ողորմելիները, որոնք յուսահատական եւ յիմարգոյրութեամբ անխնայ կերպով այս օրեր եւ աղտոտ, հոտած լու՛սն ձունքնի դուրս կը թափեն նորէն պատկառ կը պարտուին արգաստան լի թափով մը :

Ներքին տանջանքի չաւէն և հասցի՛ն տանջանքը, ա՛խ . . .

Ի՛նչ գեղեցիկ ներբողներ հիւսած էին մարդիկը կրօն Միքայէլեանի հասցեէն, ի՛նչ աստիճաններու հասցուցած էին անոր կարողութիւնները . . . եւ ասելի սրտաչարժ ընելու համար մինչև ո՛ր հասած էին — Մինչև բողոքական պատուելին . . . է՛, պէտք է, մի՛ սեղադրե՛ք, Պ.

կրօն Միջոց չի տարուան մը ան-
խոնջ եւ անզու աշխատութեան ե-
րախտագիտութիւն մըն էր որ կար-
աւայտութիւն ԶԺ որ Երախտագի-
տութիւնները ատ յարգոց կողմէն
կարտայայտուին յարգուած մարդոց
վրայ յարձակելով : Ա՛հ հոսին վա-
խր :

Սեւ հոգիներու սեւ հոգեբանու-
թիւնը պարզելու նպատակ չունիմ հի-
մա : Ինչ լաւ դիտան որ դիտենք
իւնց ամբողջ մտածումները :

Այսքան կուզէի ըսել որ, ատ սեւ
հոգիները գիտակցաբար զիս շփո-
թած կին հոյ մասնաւոր վարժարա-
նի Տնօրէն-դաստատ Պ. Կ. Պիօնեանի
հետ, արպէս զի անոր վրայ անիրաւ-
օրէն յարձակելու գոնէ առիթ մը
ստեղծեն :

Արդեօք անոր բնուցակաւ լաւ
համբաւին, յարգուած անձնաւորու-
թեանը եւ հոս ներկայութեանը մէջ
իրենց գոված, սուէն բան տակնու-
վրայ ընող պատուիրակներուն հոգին
վառնող կը տեսնեն : Տանջուեցէ՛ք :

Պ. Կ. Պիօնեան ա՛հն բանէ առաջ
իրբե յարգուած եւ մաքուր անձնա-
ւորութիւն, իբրեւ ծանօթ կարող
ուսուցիչ Պուկարանայ գաղութին
մէջ, ամենքուն ալ յայտնի է եւ
ճակատը բաց : Հետեւաբար անոր-
հասցէին եղած խճրճանքները հայ-
նորութիւնները ա՛յնքան ցածէն կու-
գան որ անոր շնն հասնիր ընդհա-
կտակը երեւան կը հանեն հասարա-
կութեան առջեւ հակապարտքներու
հոգիին սեւութիւնը :

Պ. Պիօնեանի անձը պաշտպանու-
թեան պէտք չունի : Ընկալուածութեան
ներն ու իրականութիւնները շատ
անգամ խօսքերէն շատ աւելի ուժով
դասեր կուտան :

Զի պիտի փորձեմ թողալին վար-
ձարաններու փակման պատասխանա-
տուութիւնէն խոյս տալու եւ վատա-
բար զանակցականները մրտնջու-
թեամբ փորձերնին եւ յետին մտքեր-

նին հերքել, քանի որ ամբողջ ֆիլի-
պէլին համոզում է ատոր հակա-
ռակը եւ ամենէն առաջ ատ դժբաղ-
տութիւնը ջանացողներ եղան հոյ
մասնաւոր վարժարանին զիտուն ըն-
դել, եւ վստահ իրենց էնթրիքնի-
րուն՝ ելան նոյն առ թեթիւն—Վստ-
նայի անիրաւութեան սուրբակներն—
մէջ յայտարարելու թէ՛ հոյ մասնա-
ւոր վարժարանը փակուած է, մինչ-
դեռ վարժարանը լաց էր եւ ա՛լ ա-
ւելի ետանդով կը յառաջդիմէր :

Նպատակ չունիմ նաեւ ապացուցա-
նելու որ, թաղային վարժարաննե-
րու փակման պահուն ամենէն շատ
ցաւով, ամենէն շատ հետաքրքրուող
եւ սպասնացող վտանգը մասնանի-
շողը անիրաւ յարձակումներու են-
թակայ եղող ֆիլիպէի երիտասար-
դութիւնը եղած է :

Հայ մասնաւոր վարժարանն էր որ
իրեն զիմող տասնեակ տղաքներ չը-
ղունոց, իրական ապացոյցը ստիով
թէ՛ ան զոտ գաղափարական հաս-
տատութիւն է, եւ ուրիշներու դժ-
բաղդութիւնը շահագործելու ստոր
դերը երբէք չէր կրնար վերցնել :
Մինչդեռ ատ սեւ հոգիներու ներքո
զած թողութեան խամոցը ատ չէր
չիական միջոցին դիմած է...


Աստք չնն իմ ընկերներս :
Ես րուսն կերպով կը փափաքէի
որ, իմ ստորագրութեան տակ հը-
րապարակ գայի եւ ատ սեւ հոգիներ-
րու անիրաւ յարձակումներուն հիւղ
—զիս Պ. Կ. Պիօնեանի հետ հետ շը-
փոթելու պարագան — ջանալիքի,
եթէ վստայի մէջ եղող մէկու մը վը-
նասելու նկատուիները շարքիւրին գիս :

Միայն պիտի խնդրեմ Վարժուածի
պատ. խմբագրութեանը որ, եթէ կայ
վառնայի մէջ անանկ մարդիկ որոնք
խղճմտութեան եւ ուղղամտութեան
վրայ տարբեր գաղափար ունին գո-
նէ քիչ մը եւ յարաբերութիւն ունին
ֆիլիպէի սեւ հոգիներուն աղտոտ զը-


րութիւնները հրատարակող թերթին
հետ, ցոյց տրուի երկու—երեք տա-
րիէ ի վեր իբրեւ թղթակից իմ զը-
րածներս եւ րուսն ստորագրութիւնս,
եւ արդիւնք յայտարարուի :

Ի՞նչ ես հոս ինքզինքս կը յայտ-
նեմ Կալեան ըսուած ողբալի տղուն,
որ մտաուրիշներու գուռը ինք
բացաւ, համոզուելու համար որ ֆի-
լիպէի Վարժուածի թղթակիցը եւ
Պ. Կ. Պիօնեան թողորովն տարբեր
անձնաւորութիւններ են :

Ֆիլիպէի թղթակից



ՏՕՊԻՉԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԷՆ



Տեղույս Ենթակոմիտէն, Պ. Վար-
դօի սօնավաճառը այցելելն օգտուե-
լով, հրաբրեց զինքը վարժարանի
սրահին մէջ ատենախօսելու : Նախա-
պէս ցրուած ազդարարութիւնով մը
երկնայան ժամը 1 ին ժողովուրդը հը-
րաւիրուած էր այդ տեղ :

Պ. Վարդօ նիւթ ընտրած էր «Հա-
յաստանի ներկայ կացութիւնը եւ
Սաւենյ դիմադրութիւնը» որն որ կո-
րովի շնչուելով, ակնարկ մը նետելով
անցեալ կեանքի վրայ, դրուատեց
ներսէսներու, Հայրիկներու, Բաֆ-
ֆիներու գործունէութիւնները, ա
պա անպա վերջին ժամանակներս
անոնց ցոյց տուած ուղիէն գործնա-
կանապէս ընթացող անձնագործ հեյոս-
ներու մասին, Սատիլ դատափեսայ,
այն դիրքը որոնք կեղծաւորաբար,
գրգռեցողներ ու պաշտուիներ կը շոյ-
լին Բաֆֆիներու ներսէսներու եւն.
ու վնասակար կը գտնեն Մուրաանե-
րու, Վազգէսներու Անդրանիկներու
գործունէութիւնները, և կամ ժողո-
վուրդը ընդհանուր ապստամբութեան
մը անուրջներով խաբել կը ձգտին :

Սեւ հոգիներու սեւ հոգեբանու-
թեանը եւ հոս ներկայութեանը մէջ
իրենց գոված, սուէն բան տակնու-
վրայ ընող պատուիրակներուն հոգին
վառնող կը տեսնեն : Տանջուեցէ՛ք :

Միջանկեք չմտնամ ըսելու որ,
այդ խնդրուած մէկ խնդու կրակ
ներկայացուցիչը որ ատենախօսու-
թեան եկած էր, միւս առաւօտ ըն-
կերելէն մէկուն քննելով կը մտնե-
նայ և կըսէ... հիանալի խօսեցաւ
անձ մինչդեռ ողբուիկն կը կարծէր
թէ եթակազմութիւն անգամները չէին
լսած իր ծիծաղելի արարքը, երբ սա
կը լսէ տեղույս պատուարժան հոգա-
բարձութեան Ազգ. վարժարանը են-
թակաւորութիւն տրամադրութեան տակ
դրած ըլլալը, կը փութայ հոգաբար-
ձութեան անդամներէ մէկ-թանին որ
պէս զի արդեւ ըլլայ այդ բանին,
մինչդեռ հոգաբարձութիւնը շատ ար-
դարացի արձամարհանքով մը ճամբու
կը դնէ գինքը, ըսելով որ ինքը քա-
նի որ համոզուած է այդ ձեռնարկի
օգտակարութեանը, կարհամարհէ պա-
սակալներու ոտնձգութիւնները :

Քանի մը օրերէ ի վեր վարժարա-
նի քննութիւնները սխալ են, որուն
պիտի յաջորդէ արձակուրդը : Պատ-
ուարժան թաղական խորհուրդը հա-
կատակ մեր յոռեանութեան քիչ շատ
օգտակար ըլլալու ձգտումները ցոյց
կուտայ, կը փափաքէինք որ նոր տա-
րեշրջանին քիչ շատ կարող պաշտոն-
եաններու յանձնէր, մտաող սերունդը
կրթելու փափուկ գործը :

Ժամանակէ մը ի վեր տեղս պաշ-
տոն վարող քահանայն առանց մէ-
կուն լուր տալու մեկնած է. կեղեի
աւելի ետալը հնց մը գտած ըլլալուն :
Ահա ձեզի տրապար քահանայ մը որ,
իր պարտականութեան դէմ կանաա-
տէ :

Աւելի գործնական պիտի ըլլար ե-
թէ տեղույս հայ-ազգաբնակչութիւնը
յարմար մէկը հոս տեղի համար քա-
հանայ ձեռնադրել տալով, ստորեւան
մէջ քանի մը Տէր-պապանիկ փոխելու
տխուր հարկէն ազատած ըլլար :
Ա. Ո.

ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ԵՒ
ՄԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՆԻԹԻԻՆ

Մշակուի տոս քին ճարի
Անրեւն մի Անի 1876

Այսպէս թէ եւ Արծրունի իր ծայ-
րայիղ շնորհաբերութեամբ ոտուսանայ
գրականութեան մասնագետը կը զո-
ղանկէր, անոր մէջէն գեղարուեստը
սպաննելով, սակայն իր այդ ուղղու-
թեամբ կրցաւ դարձեալ օգտակարու-
թիւն մը մատուցանել : Իսկապէս ալ
Արծրունի գրեցէ, իբր հակազդող, ի
բաւուր ունէր ծայրայիցորէն ըհա-
լիվոր քարոզելու : Արծրունեան թըր-
քական գրականութիւնը դասարկ ի-
տեղիով մը բանուած՝ ամէն ապ-
շութիւններ կարտագրէր. կոչային ժը-
պիտը, վարդին նազանքը, սոխակին
դաշայրը, լուսնին զալկութիւնը կեր-
պուէին հազար տեսակ տափակու-
թեանց ձեւափոխութեամբ : Ֆրագարա-
նութիւնը, ուսուցիկ նախադասու-
թիւններու մէջ ոչինչ չըսելու ախար
ա՛նն ատուսան յատկացած էր որ, ըն-
թերցող մը զարհուրեցի գլխու պտոյտ
պիտի ունենայ, երբ այսօր կարողայ
այդ թխած բանաստեղծութիւնները :
Սրակեան, Հէֆիմեան, Թովմաս Թեր-
զիեան, Սեֆպուրեան և բանակ մը
գրողներու բանաստեղծութիւններ կը

հրատարակէին, որ կը բացակայէր
ուժը, ուր արտաւազու գողցու յո-
մանտիզմի վշտանքներ միայն կապ-
րէին, սխուր, անձալակ, անյօջող :
Նոյնիսկ, այդ չըլանը, մեզի շարք
մը առաւ թատերգութեանց՝ որ
կեանքը կը բացակայէր, ուր շիկար
ընկերութեան և մարդկային հոգե-
բանութեան ուսումնասիրութիւնը,
ուր նոյն ճոռմարքունութիւնը,
մեւ մէջ ու ծաղիկի աւելորդարմունութիւնը
գերելը կը լինէին ու չի հասկըց-
ուած, չի ծանօթացուած հայրենասի-
րութիւնը տրապար՝ երբ կը խեղաթիւ-
րէր :

Աւելի ողբալի էր ոտուսանայ գրա-
կանութիւնը : Չունենալով գեռ իր
սեփական ուղղութիւնը, կը հետեւէր
Պոս. կան եկամուտ գրականութեան,
ու կարելի է երեւակայել թէ տափա-
կութիւնը ինչպէ՛ս իր գերագրական
աստիճանին հասցուցած կըլլար. երբ
իր նախատիպին գատարկութեան վը-
րայ կաւելցնէր կովկասեան լեզուի
անտաշութիւնը, անհարթութիւնը և
ապեղութիւնը :

Այսպէս թէ այնպէս, հայ գրակա-
նութիւնը հոգեւորքի վարկեանները
կապրէր, երբ Արծրունի հասաւ : Ու-
րիշ կերպ չէր կարելի հակազդել, փը-
կել այդ աւերակ գրականութիւնը :
Հետեւաբար պայտքը սկսաւ, պայ-
քար այդ կեղծ զգացողականութեան,
ախտաւարակ մեղամաղձատութեան,
սոխակի, վարդի ու լուսնի յախտե-

նական անշուք փառարանութեան
դէմ : Ու գրականութեան պահանջեց
լուրջ ուղղութիւն, մտածուած էջեր,
կուռ տողեր, որոնք, թողորը, համա-
խմբուելով, բազմապատկուելով, զի-
րար ամբողջացնելով՝ ձգաէին դէպի
վերականգնում մեր գահազէփօրէն
ինկած հայութեան, Եւ ահա ծնան
Բաֆֆի ու Քամուտ-Վաթիկայ, Համա-
խմբային տարաւաճում, իտուսափուկ
զգացողութիւնները, աննիւթ ու ան-
մարմին յոգեբը վանելով՝ անոնք,
վերջապէս սեզի ցոյց տուին ճամբիտ
զգացումի, մաքուր ու անսպառ ներ-
շնչումի ազբերները, որոնք միայն
կրնային հոյ գեղարուեստական հո-
գին սնուցանել, կեանք ու ազգու-
թիւն պարգեւել անոր : Առանց այդ
ոսովիրաններուն հայկական շարժում
ները չի պիտի կարողանային թափ ու
եռանդ զգենուլ, առանց անոնց՝ պի-
տի չունենայինք մեր արդի գրակա-
նութեան այն կոթողները, որոնք
անձնագործ հերոսներու կազմուրիչ ու
պաշտելի յիշատակը սղիւցաւորէն
անմահացուցին :

Ուրիշ Արծրունի չի սխալեցաւ իր
ժամանակին Բիսարէվի ու նեկրասո-
վի ուղղութիւնը մեր մէջ մտցնելու
աշխատելով : Միայն իր աշակերտնե-
րունէն է, որոնք, լինչպէս շատ մը
խնդիրներու մէջ, գրականութեան
համար սլ իրենց վարպետին հոգե-
բանութիւնը չմտնեցին քննարկու-
ածութիւն ու զգացումին խորունկու-

թեան մէջ թափանցելու սարսափե-
ցան, բառը պահեցին ու բառին ըստ-
րուկը եղան. ըհայիզմ քարոզեցին,
առանց հասկնալու, առանց ըմբռնե-
լու թէ գրականութիւնը լուսանկար-
չութիւն չէ, և ճամբիտ գրականու-
թեան մէջ պետք է, նոյնիսկ անհրա-
ժեշտ է որ ըհայիզմ և խեղաթիւ գիրար
ողջագուրեն : Այդ ապաշոյրհ աշա-
կերտներուն շնորհիւ ոտուսանայ գրա-
կանութիւնը չի կրցաւ հասնել գե-
ղարուեստական բարձրութեան, խղի
ժամանակաւոր ուղղութեան կապերը,
որոնք սկիզբ մը միայն պէտք էր ըլ-
լային ապագային համար և ընդգրկել
երեւակայութեան ամպածրար ողորտ-
ները : Անտեղի ծաղըր, արհամարհան-
քը, ինքնավստահութիւնը թոյլ չի
տուին որ ոտուսանայ գրագէտը ժամա-
նակին հետ յառաջանայ, հետեւի ըզ-
գացմանց ու մտածմանց բնաշրջումին,
արեւմտեան հոյութեան մէջ տակաւ
զարթնող նոր ու առողջ ուժին «Հո-
ստական գրականութիւնը փիթէ՞
արժանի էր ամենաթեթեւ ակնարկի
անցում : Բայց յառաջդիմութեան հըս-
կան տխրանքներու ծաղըր իսկ ոտնա-
կոխ կընէ իր ընդգծած ճամբան բա-
նալու համար, ու ժամանակ կուգայ
երբ ծաղրողները կը ծաղրուին վեր-
ջապէս :

Եւ

Շարունակելի)



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շուկայի «Պետո-Պուլկարացի» ըն-
թերցարանին ի նպաստ, մայիս 29-ին
տեղի ունենալիք վիճակահանութիւնը
վարչութեանս կամքէն անկախ պատ-
ճառներով յետաձգուած ըլլալով, ամ-
սոյս 6-ին, վարչութեանս ու երան-
դամ յանձնարարի մը ներկայութեա-
նը տեղի ունեցաւ, «Պետո-Պուլկարա-
ցի» ընթերցարանին մէջ, որմէ շահե-
ցան հետեւեալ թիւերը.

- Թիւ 91 ոսկի ժամացոյց
- » 23 պատի »
- » 60 գովոք
- » 323 Ալպէտ
- » 119 Շարժումի մի ամեայ
կրթութեան
- » 262 Մսի մեքենայ
- » 267 Կիլիկիոյ քարտէս

Թիւ 7, 54, 57, 61, 68, 129,
159, 165, 229, 245, 287, 314,
337, 373, 376, 431, 435, 458, 465,
491, Հայ յեղափոխական և պատմա-
կան գրքեր:

Թիւ 90, 101, 105, 136, 140,
176, 222, 228, 268, 322, 324, 343,
399, 444, 419, 426, 429, 474,
485, Հայ գործիչներու պատկերներ:

Վարչութիւնս, հրապարակաւ իր
խորին շնորհակալութիւնը կը յայտ-
նէ իր արգոյ գործակալներուն, և ա-
մէն անոնց, որ իրենց նիւթական ու
բարոյական ակազուսթեամբը սատա-
րեցին վարչութեանս հանրագումար ձե-
նարկին:

Յարգանք

«Պետո-Պուլկ» ընթերցարանի
Քարտուղար
Պետրոս Մովսիսեան
(Կնիք)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլէն կը հեռագրեն որ քանի
նի մը դեպքաններ ձեռնաուրութիւն
ըրած են Ռուսական դեպքանին
անոր. Բ. Դրան աւած բողոքին
համար, որ եղբր է Բիթոլիոյ
մէջ յոյներու և ռուսներու մի-
ջեւ եղած ընդհարումի առթիւ:

— Աթէնքի մէջ հիմնուած նոր
Յոյն-Մակեդոնական ընկերութիւ-
նը հեռագրով Ռուսներէն խնդ-
րած է Կակեդոնիայէն արտաք-
սումը առձէն բարեկարգիստնե-
րուն: Յունաց պատրիարքն ալ Բ.
Դրան մօտ պաշտպանած է այդ
խնդիրը:

— Սրբիական «Թամբա» թեր-
թը Սելանիքէն կիմանայ որ հոն
ձերբակալուած պուլկարներուն
քով գտնուեր են ռուսներ, ու-
րոնցմով փորձեր պիտի ըլլան ե-
ղբր եւրոպացի սպաններուն դէմ,
ինչպէս և պանք Օթոմանին:

— Սելանիքէն Վիեննա կը հե-
ռագրեն իւր 15րդ. գունտէն 300
զինուորներ զօրանոցներէն գուրս
գալով ցոյց ըրեր են, որովհետեւ
զիրենք երկու տարիէն աւելի պա-
հած են զինուորութեան մէջ:
Բարձր սպաները միջամտելով

խոստացեր են ակնկալի որ 40 օ-
րէն յետոյ արձակուին:

— Պօրէն. Պիւրոն «Պուլէն կի-
մանայ թէ Բրիտանիոյ ռէտիֆիկէն
երեք վաշտ զբաւելով հեռագրա-
տունը յայտարարած են որ անկէ
չը պիտի հեռանան, մինչեւ որ
զինուորութեան շարձակուին: Կը-
սի որ Դեաքովայի ռէտիֆիկէն
ալ միացեր են Բրիտանիոյ զին-
ուորներուն:

Կը կարծուի որ ռէտիֆիկէն
գոհացում պիտի տրուի:

ՌՈՒՍԻԱ

Մայիս 17ին Վարչապետն Պեր-
լին կը հեռագրեն թէ՛ հոն րն-
կերվարականները հակառակ պա-
տերազմի ցոյց ըրեր են, 16ի
գիշերը ցուցարարները կարմիր
դրոշակներով, որոնց վրայ գր-
ուած է եղբր «Անկցի պատերազ-
մը» հաջ և աշխատանք». փո-
ղոցներէն անցեր են, Ստիկան-
ները հալածեր են ցուցարարնե-
րը, մէկ քանի հոգի ձերբակա-
լելով:

— Տէլիի Մէլիս թերթը կի-
մանայ թէ Բաթիկեան նաւտոր-
միդի հրամանատարը յանկարծա-
կի Բեթերսպուրի կանչուած է:

— Քրոնշտատի զինարանը և
աշխատանոցը պայթուցիկ նիւ-
թով հրդեհուած են: Կը կարծուի
որ դաւադրութիւն կայ:

— Քիէֆի մէջ ձերբակալուած
են 200 ընկերվարականներ, որոնք
կը մեղադրուին իւրեւ ռուսական
պետական ներկայ կապակերպու-
թեան դէմ ապստամբելու գրգը-
նողներ:

Ձերբակալուողներու մէջ կը
գտնուին նաեւ երկու գրագէտներ
Իրաքով և Բավլովիչ:

Ստիկանութիւնը գտեր է նաև
գաղտնի տպարան մը, որուն գր-
ւորչադները նոյնպէս ձերբակալ-
ուած են:

ՅՐԱՆՍԱ

Դրամատէր Ռոդչիլո 10 միլիոն
ֆրանք նուիրեր է գործարա-
կան անեք շինելու համար:

— Շապէրի, որուն մասին կըս-
ուէր թէ միջնորդ եղած էր Քօմ-
պը կաշառելու, քոսսային մէջ
գտնուած նամակներէն կը հաս-
կցուի թէ ընկերվարական երես-
փոխան Միլոան Եւսիստն է այդ
գործին:

Սյո Նամակները կապացուցա-
նեն որ Միլոանի, Լագրավի և
Շապէրի միջեւ կապեր կան շքա-
նշաններ ծախելու համար:

Միլոան յայտարարած է որ
այդ նամակները կեղծ են և պա-
հանջած է որ քննութիւն սկսուի:

ՌՈՒՍ—ՆԱՐՈՆԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Թօքիօէն ստացուած պաշտօ-
նական տեղեկութիւններուն հա-
մաձայն, որոնք կը հաստատուին
նաեւ ռուս հեռ. գործակալու-
թիւններու կողմէն ճարտարագիտ-
բանացած են դէպի Քաշիչատ և
Խայչենկ տանող բոլոր կիրճերը,
և արդէն Լեաօ գետին հովտովը
երկաթուղիի գծին շուրջահեռա-
բար յառաջ կը խաղան:

— Բեթերսպուրի մէջ շատ
ծանր տպաւորութիւն գործած է
Քուրբաթիլիի այն հեռագրիչը,
որով կրկնուած է թէ ճարտարագիտ-
բանացած են Դալինի, Ֆէնչուլինի
և Մօտուլինի անցքերը:

— Լուի գաշտէն լուրեր կը
հասնին որ ռուս զինուորական գե-
լաւոր վարչութիւնը Խայչենկ
տեղափոխուած է:

— Բէթիլի գործակալութիւնը
16ի յունիսին թիէնցիլիէն կիմա-
նայ թէ ռուսները Խայչենկէն ետ-
մղուած են ճարտարագիտներէն, ո-
րոնք արագութեամբ առաջ կը
քաշեն: Ռուսները Խայչիչատի
հիւսիսային կողմը քաշուեր են,
վախնալով որ իրենց յարաբերու-
թիւն խզուի զօրքերու կեղծոնին
հետ:

— Չիֆուէն եկած տեղեկու-
թիւններուն համաձայն մինչու-
լէն կիլիճի մօտ ռուսները ետ մղ-
ուեր են 275 հոգի և 9 թնդա-
նօթ գերի թողլով ճարտարագիտ-
ներուն: Ճարտարագիտները 9 մը-
յոն տարածութեամբ հեռու հա-
լածուեր են:

— Ճարտար Վիեննայի դեպքա-
նը յայտարարած է որ ճարտա-
կան կառավարութիւնը խիստ քն-
նութիւն կատարած է ճարտն
զինուորներուն խոստութեանց մա-
սին տարածուած լուրերը ստու-
գելու համար, ու կը յայտարարէ
որ այդ լուրերը բողոքովին սուտ
են: Ճարտարագիտ զինուորները ճշ-
տութեամբ կը հետեւին այն խիստ
պատեհներուն, որ տրուած են
պատերազմելու ոչ ընդունակ զին-
ւորներուն հետ զթոտ ըլլալու հա-
մար:

— Լոնտօնի «Սէնթրալիստ»
թերթը կիմանայ թէ Բօրթ-Ար-
թուրի քով եղած երկրորդ ճա-
կատարարութիւնը ռուսական
ուրիշ պատերազմական նաւ մը
նաւ ոչնչացեր է:

— Բէթիլի գործակալութիւնը
Թօքիօէն կիմանայ թէ ճարտա-
գիտները Բօրթ Արթուրի երեք
ամբողջութիւնները նաև գրաւեր են,
որոնք են, Թայիկ Վանչան Զի.
Թօմշան և Թօնկուշան: Ճակա-
տարարը տեւեր է ամբողջ օր
մը. Ռուսները դէպի հարաւ նա.
հանջեր են 400 մետրալ թողլով.
ճարտարագիտներէն ընկեր են 3
սպաներ և 300 զինուոր. Երկու

ռուսական թիթաւօթիւնը Եւսի-
րենց սարքովը ինկած են ճարտ-
նագիտներու ձեռքը:

— Յունիս 14ին Բօրթ արթու-
րի ռուսական նաւատորմի գր երկ-
րորդ անգամ փորձած է բաց ծով
ելլալ, և յուսահատական կռու-
մը վերջ ստիպուեր է նա զառ-
նալ:

Ռուս մեծ զբահար մը, որուն
վրայ կը ծածանի եղբր հրամա-
նատարին գրոշակը ընկղմեր է,
իշխան Ռիթմաթիլի Բօրթ ար-
թուրի հրամանատարը Եօթ հար-
իւր զինուորով միասին ընկղմե-
լէ այդ նաւին հետ:

— Լոնտօնի թերթերը Զիֆու-
էն կը տեղեկանան որ զօրավար
Օքու ռուս ժէնէրալ Նիօսէլիա-
նալարկած է Բօրթ Արթուրը
յանձնել, սակայն վերջինս մեր-
ժած է, և Լուի վերջը ճարտարագի-
տները կրկնուին բերթը ռուսական
ծել:

— Լոնտօնի թերթերը կը հու-
ղորդեն թէ ճարտարագիտները վեր-
ջին ճակատամարտէն յետոյ, Բօր-
թափա Բերեսովէթ զբահարներուն
զինուորներէն շատերը խեղդու-
լէն սպանուեր են:

— Քայմալի թերթը կիմանայ
որ ռուսական կորուստը առաջ-
ները իմացածէն շատ մեծ է:
Սեփասթաբօլը և Դիւանան հաղի-
կարի եղբր է հասցնել նա-
ւահանգիստ: Թօքիօ նաւատոր-
միդը Բօրթ Արթուրէն երեք մը-
յոն հեռուորութեան վրայ միջո-
շարժուին վիճակի մէջ է:

ՆՈՐ ՍՍՏՅՈՒԱՆ ԳԻՐԿԵՐ

Պ. Ա. Չորանեան հրատարակած
է Մ. Պէշիկիշաճիանի քերթումա-
ները և ճառերը, բացատրութիւն-
ներով և գրաբաններու աշխար-
հար. թարգմանութիւններով
միասին: Հրատարակութիւնը մե-
ծագիր է և բաղկացած 187 ե-
րեսներէ:

Գինն է 4 ֆր.

Տպարան Անահիթի

Բակուր.— Լոյս ընծայած է—Մի-
տնութիւն կիլիկիոյ Հայկական
իշխանութեան վրայ:

Գինն է 3 ֆր. 10 սանթիմ

Տպարան թիւն

Նիկոսիայ Ազգային կրթարան
Արքանոցի

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна